Հաստատված է

ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհրդի

2016 թ. Մարտի 10-ի նիստում ընդունված N126 որոշմամբ

Սոցիոլոգիայի ֆակուլտետի ԳԽ նախագահ՝

Ա. Ե. Մկրտիչյան _____

ԵՊՀ_ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2016-2020 ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՊԼԱՆ)

ԵՐԵՎԱՆ 2016

Կրթական համակարգերում անընդհատ տեղի են ունենում դինամիկ տեղաշարժեր, որոնք միտված են առկա մարտահրավերների դիմագրավմանը և հարափոփոխ կյանքի պահանջների բավարարմանը: Այս համատեքստում բազմաթիվ երկրներում տասնամյակներ շարունակ արդյունավետ կերպով ներդրվել և կատարելագործվել են կրթության համակարգերը, որոնք լայն հնարավորություններ են ընձեռում կրթության մատչելիության, հասանելիության, ժողովրդավարացման, շարունակական կրթության ապահովման, ինչպես նաև աշխատանքի և կրթության համատեղման, արդիական գիտելիքների ու հմտությունների, մասնագիտական արժեքների ձևավորման և զարգացման համար:

Հայաստանյան իրողության համատեքստում առաջնահերթ հիմնախնդիրը կրթական գործընթացների ֆինանսական ապահովումն է: Այս առումով ԵՊՀ Սոցիոլոգիայի Ֆակուլտետի նպատակն է առնվազն 300 մլն դրամ ֆինանսական մուտքերի պահպանումը: Եվ այդ տեսակետից առաջնային է արդեն կնքված համագործակցության երկկողմանի պայմանագրերի հիման վրա իրականացվող Ֆակուլտետի **միջազգային համագործակցության** ընդլայնումը, առաջին հերթին ԱՄՆ-ի, Ռուսաստանի և արևմտաեվրոպական համալսարանների և գիտնականների, ապա միջազգային կազմակերպությունների հետ: Ֆակուլտետի կողմից տրամադրվող վճառովի ծառայությունների ընդլայնման տեսակետից կարևոր է նաև **հեռաուսուցման** համակարգի հետագա զարգացումը: Ֆինանսական հիմնախնդիրների լուծումը հնարավորություն կտա հետամուտ լինել հետևյալ ռազմավարական նպատակների իրականացմանը.

1. Արդիականացնել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը՝ ներառյալ դասավանդման և գնահատման մեթոդաբանությունը, դասընթացների բովանդակությունը, արդիական ուսումնական նյութերի և մոտեցումների կիրառումը: Պարբերաբար իրականացնել **կրթական ծրագրերի որակի** գնահատում, դասավանդման որակը

համապատասխանեցնել մասնագիտության և գիտության զարգացման համաշխարհային միտումներին, ապահովել սոցիոլոգիայի, սոցիալական աշխատանքի և հասարակության հետ կապերի բնագավառներում արտերկրի առաջատար բուհերի հետ մրցակցության ապահովման հնարավորությունները:

2. Ընդլայնել ֆակուլտետի ստորաբաժանումների գոյություն ունեցող **միջազգային** համագործակցության շրջանակը:

3. Ապահովել հետազոտության և գիտական աշխատանքի հենքով (**research-based**) դասավանդման իրականացումը, զարգացնել հետազոտական պրակտիկաների ծավալային և թեմատիկ կողմերը:

4. Պարբերաբար իրականացնել համալսարանական կրթության **որակի մոնիթորինգը** և գնահատումը, ուսումնասասիրություններին ներգրավելով նաև ուսանողներին:

5. Կատարելագործել Ֆակուլտետում կազմակերպվող մասնագիտական ուսումնական **պրակտիկաները**՝ այդ թվում նաև ամառային պրակտիկան:

6. Ապահովել ֆակուլտետի **պրոֆեսորադասախոսական անձնակազմի** շարունակական մասնագիտական աճի հնարավորությունը:

7. Իրականացնել անհատական և կոլեկտիվ հետազոտությունների արդյունքների վերաբերյալ **գիտական աշխատությունների** հրատարակում հեղինակավոր գիտական ամսագրերում՝ շեշտադրելով օտար լեզուներով հրատարակումների թվի աճի ապահովումը:

8. Մշակել և ներդնել Երևանի պետական համալսարանում միջազգային չափանիշներին համապատասխանող **հեռաուսուցման ծրագրեր** և փաթեթներ, հարկ եղած դեպքում նաև օտարալեզու կրթական ծրագրեր:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 1.1. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:										
1. Վերամշակել գործող մագիստրոսի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:		X	X							
2. Մշակել նոր կրթական ծրագիր <<Տարածքային պլանավորում և սոցիալական վարչարարություն>>:				X						
3. Ստեղծել բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»՝ ծրագրի պատշաճ մշակման և իրականացման նպատակով:		X								
4. Վերամշակել կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան: 4.1. Վերամշակել <<սոցիալական աշխատանք>>-ի բակալավրի կրթական ծրագիրը: 4.2. Վերամշակել <<սոցիոլոգիա>>-յի բակալավրի կրթական ծրագիրը :		X	X	X						
5. Մշակել և իրականացնել միջմասնագիտական մագիստրոսական նոր ծրագրեր:		X								

5.1. <<Անձնակազմի կառավարում>> (HR) ծրագիր մշակելու նպատակով ուսումնասիրել միջազգային ստանդրատները և առաջատար համալսարանների փորձը: 5.2. Մշակել ուսումնական պլան: 5.3. Մշակել համապատասխան առարկայական դասընթացներ: 5.4. Ներդնել նոր ծրագիրն ըստ ԵՊՀ-ում գործող կարգի:			X	X	X	X	X	X	X	X
6. Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ: 6.1. Ընտրել պրակտիկայի ղեկավարների և նրանց վերապատրաստել՝ տալով համապատասխան վկայական: 6.2. Վերահաստատել պրակտիկայի վայրերի ցանկը՝ ձեռք բերելով համապատասխան պայմանավորվածություններ: 6.3. Շարունակաբար համալրել այդ ցանկը՝ ընդգրկելով նոր գործընկերներ:		X	X	X	X	X	X	X	X	X
Խնդիր 1.2. Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:										
1. Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը: 1.1. Նպաստել մանկավարժական առաջավոր փորձի տարածմանը և ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը: Դասավանդման ինտերակտիվ մեթոդներ կիրառել մասնագիտական դասընթացների կազմակերպման ընթացքում: 1.2. Ամբիոնների նիստերում պարբերաբար քննարկել և որոշումներ ընդունել գործընթացի մասին: Մեթոդական գիտագործնական սեմինարների ժամանակ քննարկել և տարածել առաջավոր փորձը:	X	X	X	X	X	X	X	X	X	X

2. Կրթափորձի կարգով ներդնել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:								X	X	X
1. Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով: 3.1. Վերհանել և հետազոտել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման արտասահմանյան առկա մոդելները: 3.2. Հետազոտել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրմանը վերաբերող ՀՀ օրենսդրական դաշտը: 3.3. Հետազոտել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրմանն ուղղված Հայաստանյան փորձը: 3.4. Վերհանել սույն ոլորտում առկա հիմնախնդիրները և ներկայացնել բարեփոխմանն ուղղված առաջարկներ:	X	X	X	X	X	X	X	X	X	X
4. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսությունների) գրագողությունը կանխելու նպատակով: 4.1. Ամբիոններում կազմել և հաստատել ուսանողական հետազոտական պարտադիր աշխատանքների թեմաների ցանկ, որոնք կհամապատասխանեն արդիականության և նորույթի պահանջներին: 4.2. Մշակել և ներդնել կուրսային և ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսությունների) կատարման վերահսկման մեխանիզմներ:	X	X	X	X	X	X				

5. *Ուսումնասիրել* համալսարանական կրթության որակը, Կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիայի կողմից պարբերաբար իրականացնել մոնիթորինգ և գնահատում: Նաև պարբերաբար ուսումնասիրել *ավագ դպրոցներում աշակերտների մասնագիտական դիսպոզիցիաների ձևավորման մեխանիզմները, դրանց վերարտադրության օբյեկտիվ և սուբյեկտիվ նախապայմանները:*		X		X				X		
Խնդիր 1.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը:										
1. Փորձնական սկզբունքով ստեղծել մի շարք կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար: Հաջողված փորձը տարածել բոլոր ծրագրերում:	X	X								
2. Գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը մագիստրոսի ծրագրերի համար: 2.1. Ամբիոնների նիստերում պարբերաբար քննարկել և որոշումներ ընդունել մագիստրոսի ծրագրերի բարելավման մասին: 2.2. Ֆակուլտետի խորհրդի նիստերում պարբերաբար լսել մագիստրոսական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունները:								X	X	X
3. Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում:			X	X	X	X	X			

Խնդիր 1.4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում:										
1. Շահագործել վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար: Զևավորել անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենք:	X	X	X	X	X	X	X	X	X	X
3. Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար: 3.1. Մշակել մեթոդական ձեռնարկ առցանց դասընթացների և էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար: 3.2. Վերապատրաստել Սոցիալական աշխատանքի և սոց. տեխնոլոգիաների ամբիոնի դասախոսներին 3.3. Վերապատրաստել Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դասախոսներին 3.4. Վերապատրաստել սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի դասախոսներին			X	X	X	X	X	X	X	X
4. Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով: 4.1. Առկա համակարգում յուրաքանչյուր դասավանդվող մասնագիտական առարկայի համար ապահովել էլեկտրոնային ռեսուրսներ՝ դասավանդվող նյութերին համապատասխան web կայքերի հղումներ, որոնց միջոցով ուսանողը ոչ միայն մատուցվող նյութին այլ նաև ունենալ լրացուցիչ էլեկտրոնային ռեսուրսներից, էլեկտրոնային գրականությունից օգտվելու հնարավորություն կունենա: 4.2. Ցուցակագրել այդ էլեկտրոնային ռեսուրսները:						X	X	X	X	X
5. Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով: 5.1. Հեռակա համակարգում յուրաքանչյուր դասավանդվող մասնագիտական առարկայի համար ապահովել էլեկտրոնային ռեսուրսների ամբողջական փաթեթ՝ դասավանդվող նյութերին	X	X	X	X	X	X	X	X	X	

համապատասխան էլեկտրոնային նյութեր, որոնք կուղարկվեն յուրաքանչյուր ուսանողի էլեկտոնային հասցեին, ինչպես նաև լրացուցիչ գրականություն ինտերնետային հղումների ձևով: 5.2. Ցուցակագրել այդ գրականությունը:										X
6. Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները: 6.1. Վերամշակել հեռաուսուցման ձեռնարկներ/մոդուլներ առցանց եղանակով իրականացվող <<Սոցիալական աշխատանք>> դասընթացի համար՝ Մասնավորապես վերամշակել <<Սոցիալական աշխատանքի հիմունքներ>>, <<Սոցիալական աշխատանքի մեթոդներ>> առարկաները: 6.2. Վերամշակել <<Սոցիալական աշխատանքի մոդելներ>>, <<Սոցիալական աշխատանքի ուղղություններ>>, <<Սոցիալական աշխատանք խոցելի խմբերի հետ>>, <<Միջազգային սոցիալական աշխատանք>>, <<Մարդու իրավունքներ և սոցիալական աշխատանք>> առարկաները: 6.3. Հեռակա ուսուցման փոխարեն աստիճանաբար ներդնել հեռավար ուսուցման համակարգ սոցիալական աշխատանք բակալավրի համար:	X	X	X	X	X	X	X	X	X	X
7. Վերամշակել հեռաուսուցման մոդուլներ առցանց եղանակով իրականացվող <<Սոցիալական մանկավարժություն>> դասընթացի համար՝ մասնավորապես պլանավորվում է 2016-2020 թթ. ընթացքում վերամշակել՝ <<Սոցիալական մանկավարժություն հիմունքներ>>, <<Երեխաների զարգացման առանձնա-հատկությունները>>, <<Մասնագիտական հաղորդակցման տեխնիկաներ>>, <<Սոցիալական մանկավարժի դերը կրթության համակարգում>>, <<Երեխաների հետ աշխատանք>> մոդուլները:	X	X	X	X	X	X	X	X	X	X

II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 2.1. Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը:										
1. Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով:			X	X	X	X	X	X	X	X
2. Ապահովել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցության ընդլայնում: 2.1. Պարբերաբար հայտեր ներկայացնել ՀՀ ԳՊԿ կողմից հայտարարված դրամաշնորհների համար: Ապահովել ասպիրանտների և մագիստրանտների ընդգրկումն այդ հայտերում:	X	X	X	X	X	X	X	X	X	X
3. Խրախուսել ՈՒԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
4. Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում: 4.1. Վերանայել ավարտական աշխատանքների և թեզերի հետազոտական բաղադրիչներին ներկայացվող պահանջները, ճշգրտել և կոնկրետացնել դրանք: 4.2. Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում:	X	X X	X	X	X	X	X	X	X	X
5. Կազմակերպել Սոցիոլոգիայի ֆակուլտետի ամենամյա գիտաժողովներ:		X		X		X		X		X
6. Շարունակել և զարգացնել համագործակցությունն ազգային և արտասահմանյան գիտակրթական կենտրոնների հետ, սատարել հայագիտության զարգացմանն ու միջազգայնացմանը:	X	X	X	X	X	X	X	X	X	X

Խնդիր 2.2. Զարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:										
1. Ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման գործում:		X	X	X	X	X	X	X	X	X
2. Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
3. Նպաստել ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը: 3.1. Կրթագիտական գործընթացում ակտիվորեն ներառել արդյունավետ գործող արտաքին փորձագետներին (դրամաշնորհով ֆինանսավորվող հրավիրյալ դասախոսի, ժամավճարով ընդգրկվող դասախոսի կարգավիճակով), ապահովել դասավանդման միջառարկայական բնույթը և հետազոտական հենքը: 3.2. Կրթական ծրագրերի իրականացման ժամանակ հաշվի առնել գործատուների կարծիքը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
Խնդիր 2.4. Համալսարանում բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի չափանիշները համապատասխանեցնել Զալցբուրգյան սկզբունքներին:										
1. Նպաստել ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցությանը:	X	X	X	X	X	X	X	X	X	X

III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 3.1. Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը:										
1. Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունա-վետությունը:										
1.1. Մշակել և սահմանել ֆակուլտետների հանրային կապերի պատասխանատուների պարտականությունների շրջանկը (TOR),										
1.2. Հասարակայնության հետ կապերի վարչության կողմից ԵՊՀ ֆակուլտետների հանրային կապերի պատասխանատուների հետ պարբերական հանդիպումների ժամանակացույց մշակել, քննարկել և ներկայացնել հաստատման:	X	X								
1.3. Բարձրացնել ֆակուլտետում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ապահովման մակարդակը:			X	X	X	X	X	X	X	X
2. Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը:										
2.1. Մշակել առանձին թիրախային լսարանների հետ հաղորդակցման ռազմավարական պլանը, իրականացվող PR և մարքեթինգային արշավների արդյունավետության գնահատման գործիքներ՝ չափանիշներ, ցուցիչներ: Տարբեր թիրախային խմբերի հետ հանդիպումներ, հատուկ միջոցառումներ իրականացնել:	X	X	X	X						
2.2. Իրականացնել ԵՊՀ իմիջի ընկալման վերաբերյալ պարբերական հետազոտություններ:					X	X	X	X		
2.3. Ապահովել սոցիալական ցանցերում և պաշտոնական									X	X

կայքում հետադարձ կապի հնարավորություն:										
3. Մշակել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգ, ընդլայնել և զարգացնել Համալսարանի ներգրավումը համազգային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները: 3.1. Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգի իրականացման շրջանակներում բուհի ներքին և բուհին կից կառուցվածքային ստորաբաժանումների հետ արդյունավետ համագործակցության հաստատում (արհմիություն, ուսանողական կառույցներ, շրջանավարտների և կարիերայի կենտրոն, ֆակուլտետների ղեկավարություն և այլն): 3.2. ԵՊՀ ուսանողների և աշխատակիցների կարիքների գնահատում՝ հետազոտություն համապատասխան ծրագրային առաջարկների մշակման նպատակով՝ ուսանողական հատուկ զեղչեր, կրթաթոշակներ, նպաստներ, հավելավճարներ, սոցիալական փաթեթներ և այլն: 3.3. Տարանջատել ԵՊՀ-ի կողմից սոցիալական պատասխանատվության ծրագրով ընդգրկվող կարևոր թիրախային լսարանները՝ հաշմանդամություն ունեցող, անապահով, սահմանամերձ գոտու բնակիչներ, ազատամարտիկների զավակներ, բազմազավակ ընտանիքներ, Արցախի բնակիչներ և այլն: 3.4. Տարանջատել ԵՊՀ-ի կողմից սոցիալական պատասխանատվության ծրագրով ընդգրկվող ուղղությունները: 3.5. Հանրապետության մասշտաբով իրականացվող համապատասխան միջոցառումներում՝ բարեգործական, հովանավորչական և այլն, և նախագծերում բուհի մասնակցության ապահովում և նախաձեռնողականության ցուցաբերում:	X	X	X	X	X	X	X	X	X	X
4. Յուրաքանչյուր տարի սոցիալական աշխատողների մասնագիտական տոնի առթիվ կազմակերպել հանրապետական գիտաժողով:		X		X		X		X		X

Խնդիր 3.2. Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը:										
1. Մշակել հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը: 1.1. Իրականացնել համապատասխան մասնագիտությունների՝ աշխատաշուկայում անհրաժեշտության և պահանջարկի, մրցունակության խնդիրների հետազոտություններ: 1.2. Համապատասխան մասնագիտություններով պրակտիկա անցնելու վայրերի և հնարավորությունների ստեղծման նպատակով ընդլայնել գործընկեր ձեռնարկությունների, կազմակերպությունների, պետական կառույցների շարքը: 1.3. Գործատուների հետ համագործակցության հուշագրեր կնքել, որոնց համաձայն պարբերաբար և ուղղորդված տեղեկատվություն կտրամադրվի շրջանավարտների փորձի, մասնագետների պահանջարկի վերաբերյալ: 1.4.Կազմակերպել գործատու-բուհ համագործակցությանը նպաստող հանդիպումների, միջոցառումներ:				X	X	X	X	X	X	X

IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 4.1. Զարգացնել դասախոսական կազմի ներուժը:										
1.Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը: 1.1. Մշակել և իրականացնել դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի համար լրացուցիչ դասընթացներ՝ հեռավար ուսուցման, նեղ մասնագիտական ոլորտի, դասավանդման գործընթացում առաջացող սթրեսային իրավիճակների կառավարման, կոնֆլիկտների կառավարման, դասախոսների անձնային աճին նպաստող և այլ թեմաներով:	X									
2. Հրավիրյալ դասախոսների միջոցով կազմակերպել մասնագիտական աճին նպաստող վերապատրաստումներ:		X		X		X		X		X
3. Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների մանկավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ: 3.1. Մշակել և քննարկել երիտասարդ դասախոսների կայացմանը և զարգացմանը նպաստող միջացառումների ցանկը: 3.2. Ներդնել երիտասարդ դասախոսներին «Աջակցող դասախոսի ինստիտուտ»: 3.3. Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների համար դասավանդման և ուսուցման մեթոդների ուղեցույց /մասնագիտության համատեքստում/:		X	X							

4. Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների համար ուսանող-դասախոս հաղորդակցման հմտությունների և էթիկայի վերաբերյալ դասընթաց				X	X	X	X	X	X	X
5. Սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների:		X	X	X						

VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 6.1. Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով:										
1. Վերհանել ուսանողների կրթական և այլ կարիքները և գնահատել նրանց բավարարվածությունը մատուցվող ծառայություններից: 1.1. Անցկացնել համալիր սոցիոլոգիական հետազոտություն՝ ուղղված ուսանողների կրթական և այլ կարիքների վերհանման և նրանց մատուցվող ծառայություններից բավարարվածության գնահատմանը: 1.2. Վերլուծել համալիր հետազոտության արդյունքները և ներկայացնել հաշվետվությունը: 1.3. Անցկացնել համալիր կոհորտային սոցիոլոգիական հետազոտություն՝ ուղղված ուսանողների կրթական և այլ կարիքների դինամիկայի /փոփոխությունների/ վերհանման և նրանց մատուցվող ծառայություններից բավարարվածության դինամիկայի գնահատմանը: 1.4. Վերլուծել համալիր կոհորտային հետազոտության արդյունքները և ներկայացնել հաշվետվությունը:	X	X	X	X						
2. Ներդնել հեռավար եղանակով իրականացվող խորհրդատվությունների համակարգ առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար: 2.1. Սպասարկել հատուկ էջը ԵՊՀ պորտալում, որը կներառի խորհրդատվական բնույթի տեղեկատվություն և խորհրդատվության նպատակով առցանց կապի հաստատման հնարավորություն առանձնահատուկ կարիքներ ունեցող			X	X	X					

ուսանողների համար /Սոց. աշխատանքի ամբիոն/: **2.2**. Առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողներն այդ էջի միջոցով օֆ-լայն և օն-լայն ռեժիմներով կստանան անհրաժեշտ տեղեկատվություն ֆակուլտետի կողմից իրականացվող կրթական ծրագրերի և դասընթացների վերաբերյալ:						X	X	X	X	X
3. Ապահովել շրջանավարտների հետ Համալսարանի և առանձին ֆակուլտետների շարունակական կապը և խթանել շրջանա-վարտների կողմից Համալսարանին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները			X	X	X	X	X	X	X	X

VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 7.1. Զարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով:										
1. Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգը:	X	X	X	X	X	X	X	X	X	X
2. ԵՊՀ-ում և ՀՀ մարզերում դպրոցների ավարտական դասարան-ների աշակերտների համար հասարակագիտական առարկաների գծով ամենամյա օլիմպիադաներն անցկացնել 2 փուլով՝ ընդլայ-նելով մասնակիցների շրջանակը: 1-ին փուլում կազմակերպել <<սոցիոլոգիական դպրոցներ>>, 2-ում՝ բուն օլիմպիադան:					X	X	X	X	X	X
3. Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան: 3.1. Քննարկել և պայմանավորվածություն ձեռք բերել ԵՊՀ մինչհամալսարանական կրթության վարչության հետ քոլեջների և ավագ դպրոցների սովորողների այցերը կազմակերպելու մասին: 3.2. Իրազեկել ամբիոններին «Բաց դռների օրեր» -ի մասին, քննարկել ընդունելիության կարգը, պլանավորել միջոցառումները, ընտրել պատասխանատուներ աշակերտների ընդունելությունները կազմակերպելու համար:	X									
3.2 Սոցիալական աշխատողների հանրապետական տոնի առթիվ ամեն տարի կազմակերպել բաց դռների օր և ներկայացնել սոցիալական աշխատանք բաժնի գործունեությունը:		X	X							
3.3. Պարբերաբար իրականացնել տարբեր դպրոցների համար				X	X	X	X	X	X	X

«Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր ֆակուլտետ:										
4. Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները ՀՀ բոլոր մարզերում և այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններին ապահովել անհրաժեշտ տեղեկատվական նյութերով: 4.1. Յուրաքանչյուր ամբիոնից ընտրել դասախոսների խումբ՝ ՀՀ մարզերի դպրոցներում մասնագիտության լուսաբանման նպատակով հանդիպումներ անցկացնելու համար: 4.2. Մշակել ֆակուլտետի, ամբիոնների վերաբերյալ տեղեկատվական փաթեթներ դիմորդների համար: **4.3.** Համագործակցել ԶԼՄ-ների հետ դիմորդներին հասցեագրված հաղորդումներ կազմակերպելու նպատակով:	X	X	X	X	X	X	X	X	X	X
5. Ընդլայնել ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների շրջանակը: Շարունակել ԵՊՀ դասախոսական կազմի կողմից մայրաքաղաքի ավագ դպրոցներում դասընթացների, իսկ մարզային դպրոցներում՝ առանձին դասախոսությունների իրականացումը: 5.1. Մշակել մասնագիտության ընտրության վերաբերյալ աշակերտների համար դասախոսություններ, ինչպես նաև՝ ուղեցույց: Ստեղծել մասնագիտությունների և ֆակուլտետի մասին հոլովակ դպրոցներում ցուցադրելու նպատակով: 5.2. Ամբիոններում քննարկել և կազմել մայրաքաղաքի ավագ դպրոցների այցելության ժամանակացույց: Մինչհամալսարանական վարչության միջոցով կապ հաստատել ավագ դպրոցների տնօրինությունների հետ, ձեռք բերել պայմանավորվածություններ և կատարել այցելություններ:	X	X	X	X	X	X	X	X	X	X

VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 8.1. Ապահովել Համալսարանի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները:										
1. Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ վճարովի ծառայությունները: 1.1 Հեռաուսուցման լաբորատորիայի գծով մշակել և ներդնել նաև կարճաժամկետ դասընթացներ հետևյալ թեմաներով՝ - Քոուչինգը որպես արդի ղեկավարի արդյունավետ գործիք - Տպավորիչ պրեզենտացիաների անցկացման հմտություններ, - Վաճառքները մարքեթինգում, - Դիզայն մարքեթինգ, - Գործարար իմիջ և բիզնես էթիկետ, - Արդյունավետ իմիջ և բիզնես էթիկետ, - Սթրեսի կառավարում, - Կոնֆլիկտների կառավարում, - Ինքնաներկայացման հմտություններ, - Հոգեբանական հակազդեցության հմտություններ, - Գրավոր հաղորդակցությունը գործարար ոլորտում, - Ժամանակի կառավարում, - Նախագծերի կառավարում, - Ինչպես ընդունվել աշխատանքի (CV, motivation letter, Interview)	X	X	X	X	X	X	X	X	X	X

- Ձեռներեցության կարողությունների զարգացում: 1.2 Մշակել և ներկայացնել հայտեր միջազգային դրամաշնորհներ ստանալու համար:										
2. Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Համալսարանի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից Համալսարանին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները: 2.1 Յուրաքանչյուր տարեվերջին հավաքագրել ավարտական կուրսի ուսանողների կոնտակտները՝ հեռախոսահամարներ, էլ.հասցե, աշխատանքային վայր և այլն: 2.2 Շրջանավարտների հետ կապի պահպանման նպատակով ստեղծել «Շրջանավարտների տեղեկատվական բազա»: 2.3 Պարբերաբար թարմացնել բազան: 2.4 Շրջանավարտներին պարբերաբար իրազեկել /հրավիրել/ ֆակուլտետային կյանքի, իրականացվող միջոցառումների, հրավիրվող օտարերկրյա դասախոսների կողմից իրականացվող դասախոսությունների և այլնի մասին: • *Երկխոսություն սկսել առավել հաջողված շրջանավարտների հետ՝ ֆակուլտետին աջակցելու իրենց հնարավորությունների վերաբերյալ,* • *Որպես քաջալերանք ներգրավել <<հաջողված շրջանավարտներին>> ներկա ուսանողների հետ հանդիպումներում՝ հրավիրյալ խոսնակի կարգավիճակում:* • *Համալսարանի թերթում՝ նրանց մասին փոքրիկ հոդվածներ զետեղել:*	X	X	X	X	X	X	X	X	X	X

IX ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)	I Կիս. (01-06)	II Կիս. (07-12)
Խնդիր 9.1. Զարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը:										
1. Հստակեցնել միջազգայնացման դերակատարների գործառույթները ֆակուլտետի կառուցվածքային տարբեր մակարդակներում, սահմանել և կիրարկել նրանց խրախուսման մեխանիզմները:	X	X	X	X	X	X	X	X	X	X
2. Ստեղծել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտ: 2.1. Նշանակել ֆակուլտետի հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտի համակարգողին: 2.2. Ֆակուլտետում բոլոր ամբիոնների և իրականացվող /իրակա-նացված/ ծրագրերի գծով գործընկեր համալսարանների և գիտական կենտրոնների համապատասխան ներկայացուցիչների ցուցակ կազմել, իրենց հետ հետագայում համագործակցության հեռանկարների և արդյունավետության գնահատում իրականացնել, ցուցակում առավել կայուն և արդյունավետ համագործակցմամբ առանձնացող մասնագետ-գիտնականների տվյալների հենք ձևավորել:	X	X								
2.3. Առանձնացված արտասահմանյան մասնագետներին ներկայացվել առաջարկ՝ դառնալու ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի հրավիրյալ պրոֆեսոր՝ պաշտոնապես և գրավոր ձևով արտահայտելով կայուն կերպով ֆակուլտետի հետ համագործակցելու, համատեղ հետազոտական և կրթական			X							

ծրագրեր առաջարկելու և իրականացնելու վերաբերյալ հետաքրքրվածությունը: 2.4. Ֆակուլտետի հրավիրյալ պրոֆեսորների հետ կնքել պայմանագիր՝ նշելով իրավունքների և պարտականությունների ցանկը, ինչպես նաև ծրագրավորելով իրենց հետ համագործակցության կոնկրետ քայլերը: 2.5. Ապահովել ԵՊՀ կայքի ֆակուլտետային էջում հրավիրյալ պրոֆեսորների մասին համապատասխան տեղեկույթի տեղադրումը: 2.6. Իրականացնել հրավիրյալ պրոֆեսորների հետ ստորագրված աշխատանքային ծրագրերը				X	X	X	X	X	X	X
3. Զարգացնել համագործակցությունը ավանդական գործընկեր համալսարանների հետ, հաստատել գործընկերային կապեր արտասահմանյան այլ բուհերի հետ:	X	X	X	X	X	X	X	X	X	X
4. Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի և այլ ռուսաստանյան առաջատար համալսարանների բարձրակարգ մասնագետների հրավիրել սոցիոլոգիայի ֆակուլտետ դասախոսություններ և գիտական զեկուցումներ կարդալու համար:	X	X	X	X	X					
Խնդիր 9.2. Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում:										
1. Զարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ:		X	X	X	X	X	X	X	X	
2. Ֆակուլտետի ուսանողների համար հնարավորություն ապահովել մասնակցելու միջազգային կրթական ծրագրերին:	X	X	X	X	X	X	X	X	X	X